

Մ. Նալբանդյանի երկերի վեցհատորյակի նոր ակադեմիական հրատարակությունը նախապատրաստելիս մենք վերադարձանք Աս. Ասատրյանի հիպոթեզին: Մեր տեքստաբանական հետազոտությունները (ըստ բովանդակության, լեզվի և ոճի) ցույց տվեցին, որ Աս. Ասատրյանը կանգնած էր ճիշտ ճանապարհի վրա և արդեն այն ժամանակ հարկ էր ուշադրության առնել թեկուզ և երկու կեղծանունների՝ «Կամսար խաչատուրյանի» և «Կիրակոս Մարգարյանի», շուրջ նրա բերած փաստարկները: Այդ ուղղությամբ որոնումները մենք շարունակեցինք և եկանք այն եզրակացության, որ մնացած կեղծանունները ևս պատկանում են Մ. Նալբանդյանին: Սույն հոդվածում կանգ ենք առնում Մ. Նալբանդյանի յոթ ծածկանունների վրա՝ «Կամսար խաչատուրյան», «Կիրակոս Մարգարյան», «Մարտիրոս Ասլանբեկ» և «Պողոս Ղուկասյան», իսկ մյուս երկու ծածկանուններին՝ «Թյուլթյունջի Հակոբ Հարությունյան Սերոբյանց» և «Սատուր Զելեպի», կանգնադառնանք այլ առիթով:

1. «Լուսմասր խաչատուրյան»: Այս ստորագրությամբ «Հյուսիսսփայլում» հրապարակվել է «Նամակ» (1859 թ. հոկտեմբերի 26-ին, Թիֆլիս)⁵: Նրանում հեղինակը պատմում է Արևելյան և Արևմտյան Հայաստան կատարած իր ճանապարհորդության մասին: Աս. Ասատրյանի հիմնական փաստարկներն այն մասին, որ «Նամակը» պատկանում է Մ. Նալբանդյանի գրչին, հետևյալն են: 1. Իբրև «Նամակը» գրելու տեղի՝ Թիֆլիսի մատնանշումը «ծածկագրության համար է, որ հաճախ է կիրառել Մ. Նալբանդյանն իր մյուս «Նամակ-հորվածների համար»: Իրականում Մ. Նալբանդյանը մինչև 1859 թ. հոկտեմբերի վեցը (արտասահմանից վերադառնալուց հետո) գտնվում էր Մոսկվայում, որից հետո նա գնաց Պետերբուրգ: 2. «Նամակը» սկսվում է «Միրելի եղբայր իմ Լուսիկ» բառերով: Դա Մ. Նալբանդյանի հոր գծով եղբայր Լուսեղենն է, որին Մ. Նալբանդյանը Պետերբուրգից նամակ է ուղարկել 1860 թ. մարտի 30-ին, և այն սկսվում է նույն կերպ. «Միրելի եղբայր իմ, Լուսեղեն...» (V, 90)⁶: 3. «Ինչպես մյուս ծածկանուններով գրված մի շարք «Նամակ»-հորվածներում, նույնպես և այս «Նամակում» հեղինակն իրեն ներկայացնում է որպես «Հյուսիսսփայլի» հետ անձամբ առնչություն ու մոտիկ ծանոթություն չունեցող մեկը...»: Մ. Նալբանդյանն այդ հնարքին է դիմել Ռեդուտկալեից 1858 թ. ապրիլի 14-ին Կոմս էմմանուելին Սերովբե խաչատուրյան. Շահ-բեգի ուղղած նամակում (III, 14): 4. «Նամակի» սկզբում հեղինակն ասում է, որ «իբր ուղևորության առիթն ու պատճառն իր առողջական վիճակն է եղել»: Մ. Նալբանդյանը ճիշտ այդպես է պատճառաբանում նաև Կոմս էմմանուելի ուղևորությունը՝ «Մեռելահարցուկ» վեպի է գլխում (I, 281): Բայց Աս. Ասատրյանն այստեղ ուշադրություն չի դարձրել մի էական հանգամանքի վրա: Նամակի հեղինակը հաղորդում է, որ «գարնանային հիվանդության» պատճառով և «պ. բժշկապետ Ա. Ն. բարեկարմական առաջարկություններով և նորա խորհրդակցությամբ» նա որոշեց «գուրս գալ ճանապարհորդության»: Հենց 1859 թ. գարնանը Մ. Նալբանդյանի առողջությունը, իրոք, խիստ վատացավ և բժիշկների՝ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի (որտեղ նա սովորում էր) դասախոսների խորհրդով գնաց արտասահման բուժվելու, որի մասին նա հաղորդում է 1859 թ. մարտին իր համերկրացի Գ. Սալթիկյանին ուղղած նամակում. «Ես իմ տկարության պատճառով, խռոճուրդով վերվիճակում և Գլխովի, գնում եմ սահմանից դուրս...» (V, 81): «Բժշկապետ Ա. Ն.»-ը հավանաբար Անքեն է՝ բժշկական ֆակուլտետի դեկանը, որի մասին Մ. Նալբանդյանը գրում է բժշկական ֆակուլտետի մահացած ուսանող Գ. Գեղամյանին նվիրված մահախոսականում («Հյուսիսսփայլ», 1858, № 2)՝ «Ֆակուլտետի դեկան և ուսուցչապետ Անքե վարդապետը» (II, 190): 5. Կ. խաչա-

⁵ «Հյուսիսսփայլ», 1860, № 1, էջ 70—78:

⁶ Այստեղ և հետագայում մեջբերումները արված են հետևյալ հրատարակությունից՝ Մ. Նալբանդյան, Երկերի լրակատար ժողովածու 6 հատորով, հ. I—V, Երևան, 1979—1984: Բնագրային բոլոր ընդգծումները մերն են:

տուրյանը հանդիպում է «մի հարումաշ ծերունու», որն իր արտաքին նկարագրությամբ հիշեցնում է Կոմս էմմանուելին («Մեռելահարցուկ» վեպում) հանդիպած ծերունուն (I, 283): 6. Կ. հաշատուրյանի «Նամակը» ալլաբանական մի պատում է, որը շատ հատկանշական է Մ. Նալբանդյանի ինչպես հրապարակախոսության, այնպես էլ արձակի համար: «Նամակի» հեղինակը կերտել է իր կերպարների անունների ծածկագրության մի ձև, որը կոչվում է գրաշրջություն և որին հանդիպում ենք Մ. Նալբանդյանի երկերում, մասնավորապես «Հիշատակարանում»։ օրինակ. Գիրսաս ծածկագիր անունը ստացվել է Սաբ-սիս անվան տառերի վերադասավորումից (III, 43): Նույն ձևով Կ. հաշատուրյանի «Նամակում» կազմվել են Մերուկ Մարա—«Արամը» և նրա երկու որդիների՝ Նվհզակորան—«Հոգեորականը» ու Կարախանշահ—«աշխարհականը»: Այստեղ հարկ է ճշտում մտցնել. վերջին երկու անունները Աս. Ասատուրյանից առաջ վերծանել է Մ. Մխիթարյանը, խոսելով «ոմն հաշատուրյանի» նամակի մասին և շանդդադառնալով դրա հեղինակության հարցին⁷: Աս. Ասատուրյանը ճիշտ նկատել է, որ «Մերուկ Մարան Արամ Նախապետն է, և դա ապացուցվում է կերպարի ալլաբանական-սիմվոլիկ իմաստով ևս, քանի որ նա Արամ Նահապետի վերաբեռյալ Նալբանդյանի ունեցած հայացքի ճշգրիտ մարմնավորումն է, իսկ Մերուկ Մարայի որդիները «Նամակում» մարմնավորում են հայ հոգեորական և աշխարհական դասերի նկատմամբ Նալբանդյանի ունեցած քննադատական հայացքը», որն արտացոլվել է նրա մի շարք ստեղծագործություններում («Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանը», «Մեռելահարցուկ», «Հիշատակարան», Գ. Այվազովսկու «Վարդապետարանի» քննադատությանը նվիրված «Նամակները»): Դրանց ավելացնենք այդ ժամանակ գեղ չհրատարակված՝ Մ. Նալբանդյանի վաղ շրջանի «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ» (1854—1855) աշխատությունը: 7. Աս. Ասատուրյանը տեքստային գոեգադիպություններ է բերում Կ. հաշատուրյանի «Նամակում» Կոմս էմմանուելին 1858 թ. սեպտեմբերի 18-ին և 1859 թ. փետրվարի 14-ին Ս. Շահբեգի ուղղած նամակներում՝ Մ. Նալբանդյանի «Հիշատակարանից»:

Կ. հաշատուրյանի «Նամակի» առթիվ Աս. Ասատուրյանի ասածին ավելացնենք, որ Մ. Նալբանդյանը կեղծանուններով ստորագրված իր նամակ-հոդվածներում հաճախ իրեն ներկայացնում է որպես պարզ ու անարվեստ ոճի հեղինակ: Այսպես, «Ա. Ա. Ե...» ստորագրությամբ «Նամակ Կոմս էմմանուելին» հոդվածում (գրված 1861 թ. փետրվարի 10-ին) Մ. Նալբանդյանը խոստովանում է. «... Ահա՛ ...իմ անաբանական ոճով նամակագրության իսկական պատճառը...» (III, 270—277): Իսկ ահա Կ. հաշատուրյանի խոստովանությունը՝ «Ահա, իմ ճանապարհորդության իսկական հետևանքը... ինչ որ տեսա ու լսեցի գրել եմ պարզ և անաբանական ոճով»: Բայց, իմիջիայլոց, Կ. հաշատուրյանի «Նամակը» գրված է վարպետի գրչով: Այնտեղ տրված են Մերուկ Մարանի և նրա որդիների վառ կերպարները, նկարչի նուրբ վրձնով կերտված է բնապատկերը: Ահա թե ինչպես է տրված լուսաբացը գետի վրա. «Գիշերը մոտ էր լուսանալու, լուսինը գլուխը խոնարհեցնում էր բարձի վերա... Իմ բոլոր շրջակայքումն և այն ժայռի տակ, ուր նստած էի ես, պսպղում էին աստղերը միայն, շիջանդ մոմի պես և փայլում էր միայն լուսինը իր վերջին լուսով»: Այս ամբողջ հիանալի պատկերը վաղ նոր հայկական ռեալիստական արձակի անհայտ էջերից է, արձակ, որի հիմնադիրներից մեկը Մ. Նալբանդյանն է:

2. «Կիրակոս Մարգարյան»: Այս ստորագրությամբ հրապարակված է «Նամակ առ հրատարակողը» հոդվածը («11 հունիսի, 1860, Մոսկվա»)⁸: Այն գրված է ի պատասխան Մոսկվայից Սկալորդու թղթակցության՝ «Մասնավոր թղթակցություն Ռուսիո»⁹: Աս. Ասատուրյանը միանգամայն իրավացիորեն կապ

7 Մ. 2. Մխիթարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևան, 1958, էջ 214—215:

8 «Հյուսիսափայլ», 1860, № 8, էջ 170—178:

9 «Մեղու Հայաստանի», 1860, № 17 (ապրիլի 23), էջ 129—131:

է տեսել Կ. Մարգարյանի «Նամակի», Մ. Նալբանդյանի «Սկայորդու տարածած լուրերը» նոթի («Հիշատակարանի» վերջին գլխից՝ «Հյուսիսսփայլ» (1860, № 6) և Ս. Վարշամյանց ստորագրությամբ «Նամակ Կոմս էմմանուելինի» («Հյուսիսսփայլ», 1860, № 11) միջև¹⁰։ Բոլոր երեք հրապարակումներն ուղղված են «Հյուսիսսփայլի» կատաղի հակառակորդների՝ «Ճռաքաղ» ամսագրի հրատարակիչների՝ Լազարյան ճեմարանի աստվածաբանության և գրաբարի ուսուցիչ Մսեր Մսերյանցի ու նրա որդու՝ Զարմայր Մսերյանցի (Սկայորդու) դեմ։ Իր «Նամակում», որը Կ. Մարգարյանն անվանում է «կարճ ի կարճու դրած», նա հաղորդում է, որ պատրաստել է մի «ընդարձակ ճառ», որը Աս. Ասատրյանի կարծիքով հենց «Նամակ Կոմս էմմանուելինին» է՝ Ս. Վարշամյանց ստորագրությամբ։ Եվ դա իրականում այդպես է. երկու նամակում էլ մենք հայտնաբերեցինք փոխառություններ Մ. Նալբանդյանի աշխատություններից։ Բերենք օրինակներ. 1. Մ. Նալբանդյանը հին հաշիվներ ուներ Մ. Մսերյանցի հետ՝ այն ժամանակից, երբ նրանք միասին աշխատում էին Լազարյան ճեմարանում։ Դեռ «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ» հոգևածում Մ. Նալբանդյանը ծաղրում էր Մ. Մսերյանցի «Հրահանգ քրիստոնէական հաւադոյ» (1850) դասագիրքը, այն անվանելով «քրիստոնեական դասնարանութիւն (կատեխիզիս)», քանի որ «հայ գործ Մագիստրոսիդ տեսանեմ յաւէտ խուռն բազմութիւն վկայութեանց աստի և անտի համաքելոց, քան թէ ընթերցանելի բանս առ է հեղինակեն։ Որպես մեզ թուի՝ կրօնուսուց (նկատի ունի Մ. Մսերյանցին—Ա. Դ.) մատենագիրք մեր ի գրելն զայսպիսիս ունին իւրէանց կէտ նպատակի կրթել զուստ եկեղեցւոյն, որոնց շատ թէ սակաւ հասկանալի է հինն բարբառ...» (II, 18)։ Իր «Նամակում» Կ. Մարգարյանը նույնպես երկու աշակերտների բերանով ծաղրում է Մ. Մսերյանցի «դասավանդման մեթոդները», բացահայտորեն ակնարկելով վերոհիշյալ գիրք-կատեխիզիսը։ «...Այս Կրօնուսուցը (Մ. Մսերյանցը—Ա. Դ.) չէ՞, որ միշտ դասատվության ժամանակին անթիվ օրինակներ է բերում Ավետարանից. Աւետարանը գրվածքներից, Աստվածաշունչ պատգամներից...»։ Բերելով 14 նրման քաղվածքներ, «Նամակի» հեղինակն ավելացնում է. «մյուս անգամ երկար կիսոսենք այս մասին», նորից ակնարկելով Ս. Վարշամյանցի նամակը («ընդարձակ ճառ»)։ Վերջինս բնութագրելով «Ճռաքաղի» լեզուն, կասի, որ այդ «քաջահմուտ հայկաբան» Մ. Մսերյանցը «մեր աշխարհաբար լեզուն շինել է տիրացուի շիլափով կամ ուսաց պահոց (պապվա) վինեգրետ» (III, 338)։ Իր «Ճառում» Մ. Նալբանդյանը գրել է, որ Մ. Մսերյանցի աշխատությունները «դրեալս իբր նոր հայախօսութեամբ», բայց «ըստ խղճի մտացն վկայելոյ, չեն այլ ինչ եթէ ոչ խառնուրդ հին և նոր հայախօսութեան, ոչ սառն իմն և ոչ ջերմ, այլ գաղղ...» (II, 45), այսինքն նույն «շղիւփալամին» է։ 2. Մ. Նալբանդյանի «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» (1858—1859) հայտնի պամֆլետում Մ. Մսերյանցը ներկայացված է «գրականության դևի» կերպարով։ Սատանայի պահանջին՝ «խոսել պարզ և կենդանի բարբառով», նա պատասխանում է, որ աշխարհաբարը գրաբարի համեմատությամբ «անհամ է, թույլ, տգեղ, անհեթեթ, ախագուր» (I, 367)։ Այդ իսկ արտահայտությունը Մ. Մսերյանցին է վերագրվում նաև Ս. Վարշամյանցի նամակում։ Ընդ որում, բազմիցս կրկնվելով, այն դառնում է ամբողջ նամակի լեյտամոտիվը (III, 339, 341, 345—349)։ Եվ «Յաղագս հայկական մատենագրութեան ճառը», և՛ «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» Մ. Նալբանդյանի կենդա-

¹⁰ Այժմ անհերքելիորեն ապացուցված է, որ Մ. Նալբանդյանն արմատապես վերափոխել է Ս. Վարշամյանցի հոգևածը, այդ իսկ պատճառով, այն կրկին մտել է Մ. Նալբանդյանի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության մեջ (Հ. III, Երևան, 1982)։ Տե՛ս նաև Մ. Հ. Մխիթարյան, Նորից Սարգիս Վարշամյանցի նամակի առթիվ («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 243—252)։

նության օրոք չհրապարակվեցին և, հետևաբար, իրական Ս. Վարշամյանցը¹³ ոչ մի կերպ չէր կարող դրանք օգտագործել իր նամակում: Դա արել է Մ. Նալբանդյանը:

Այսպիսով, ինչպես ենթադրում էր Աս. Ասատրյանը, «կարճ ի կարճո գրածի» (Կիրակոս Մարգարյան) և «ընդարձակ ճառի» (Սարգիս Վարշամյանց) հեղինակը նույն անձն է՝ Մ. Նալբանդյանը: Ինչպես և պետք էր սպասել, Մսերյանցները մամուլում Կ. Մարգարյանի «նամակի» դեմ հանդես եկան բողոքով, որին հետագոտողներն ուշադրություն չեն դարձրել: Մ. Մսերյանցը հանձինս «Կրոնասուլցի» տեսնելով իրեն, շտապեց հերքել «նամակում» բերված երկխոսությունը և աղարկել իրեն, շտապեց հերքել «նամակում» բերված և Ղևի միջև, ասելով թե նրանք «դեռ չեն ծնված»¹², նվ դա էլ Մ. Նալբանդյանի նպատակն էր: Մ. Մսերյանցի նամակից հետո «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի նույն համարում նրա որդի Սկայորդին զետեղեց «Հյուսիսափայլի» հրատարակչին իր ուղղած նամակի պատճենը¹³, «նամակի» հեղինակին անվանելով «նորածին Կիրակոս», նա բացահայտորեն ակնարկում էր ամենահաս Կոմս էմմանուելին, ուր դրանից երկու ամիս առաջ իր «Հիշատակարանում» վերաբերել էր Սկայորդուն՝ «Մեղու Հայաստանի» (1860, № 17) այդ նույն հրապարակման համար:

Նվ այդպես, արդեն ժամանակակիցները (որոնք տուժել էին Մ. Նալբանդյանի սուր գրչից) կռահում էին, թե ով էր թաքնվում «Կիրակոս Մարգարյան» ստորագրության տակ: Ինչպե՞ս է յուրա աշխարհ եկել «նամակի» Կիրակոսը: Հավանաբար, Ուլ Մարկոսը և ոչ Կիրակոսը ժողովրդական արտահայտությունից, որը հաճախ է հանդիպում Մ. Նալբանդյանի «Հիշատակարանում» (III, 68), «Մեղուհարցուկ» վեպում (I, 268) և այլ ստեղծագործություններում (II, 323): Ինչ վերաբերում է «նամակի» ամսաթվին և գրության վայրին, ապա ինչպես Մ. Նալբանդյանի մյուս ստեղծագործություններում է՝ դրանք մտացածին են. այն «գրելու» պահին Մ. Նալբանդյանը գտնվում էր Պետերբուրգում և ոչ թե Մոսկվայում:

Խոսելով իր «թղթակիցների» մասին, Մ. Նալբանդյանը «Հիշատակարանում» գրել է, որ նրան չի շփոթեցնում, եթե «ստորագրությունը լինի... մի շինովի անուն... Մեք շատ ուրախ ենք այսպիսի թղթակիցների վերա և եթե կամենան, կարող են ծածկած մնալ հասարակությանից, երևելով բոլորովին այլ զգեստով...» (III, 193): Նվ ճիշտ էր Աս. Ասատրյանը, ասելով, որ եթե Մ. Նալբանդյանը շարունակեր իր «Հիշատակարանը», ապա Կ. Մարգարյանի «նամակը» Կոմս էմմանուելի բազմաթիվ «թղթակիցների» մյուս նամակների շարքում կմտներ նրա մեջ:

3. «Մառտիրոս Ասլանբեկ»: Այս ստորագրությամբ հրապարակված է «նամակ» (սեպտեմբերի 1860 թ. Մոսկվայի մեջ)¹⁴: Դա, ինչպես նաև Կ. Խաչատուրյանի ստորագրությամբ հրապարակված ներկայացված է «մասնավոր» նամակի տեսքով, տվյալ դեպքում ոմն «պարոն Բաղդասարի» անունով: Նրա կերպարում ներկայացված է վաճառական-գիշատիչը, որը մեզ հիշեցնում է վաճառականների ու կոմերսանտների սատիրական կերպարները, պատկերված Մ. Նալբանդյանի կողմից՝ Բեգզադե («Հիշատակարան») և հատկապես Հովնաթանյանց («Մեղուհարցուկ»): Նրանց բոլորին Մ. Նալբանդյանը անվանել է գողության ձևով՝ «գնալուն մեղադրել» (I, 282): Սրանց պետք է ավելացնել նաև պարոն Բաղդասարին, որը ևս ունի «պաղ և մեղած սիրտ»: Նվ՝ ձևով, և՛ բովանդակությամբ Մ. Նալբանդյանի «նամակը» շատ մոտ է Կոմս էմմանուելի նամակին՝ հասցեագրված Հովնաթանյանցին: Կոմսը նրան

11 Ս. Վարշամյանցի (Բաբու) իրական լինելը պարզել է Ռ. Նանումյանը («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 187—195):

12 «Մեղու Հայաստանի», 1860, № 37 (10. IX), էջ 291:

13 Նույն տեղում, էջ 291—292:

14 «Հյուսիսափայլ», 1860, № 3, էջ 237—243:

միանգամայն անհարգալից անվանում էր «հստաագլուխ» (I, 336): Այդ մակդիրը դարձել է Մ. Ասլանբեկի հասցեատիրոջ մականունը: Մ. Ասլանբեկը նրան դիմում է ավելի անհարգալից՝ «Հաստագլխենց պարոն Բաղդասար»: Կոմս էմմանուելն իր նամակում Հովնաթանյանցին հիշեցնում է Մ. Նալբանդյանի «Հայ մարդու հայրենիքը» բանաստեղծությունը (սելուսիսափայլ», 1858, № 3), որը մերկացնում է արծաթապաշտ կեղծ հայրենասերներին: Այն հավասարապես կարող է ուղղված լինել նաև պարոն Բաղդասարին, որին «Նամակի» հեղինակն անվանում է «անձնահաճ մեծատուն», «ամառդի» մարդ: Կոմս էմմանուելը Հովնաթանյանին ուղղված նամակում բացատրում է, թե դա որտեղից է գալիս. «...Արծաթն է տալիս ձեզ այդպիսի ամառդի իրավունք...» (I, 337): Ե՛րբ Հովնաթանյանցը, և՛ Բաղդասարը մարդկային կերպարանքը կորցրած դաժան գիշատիչներ են: Հովնաթանյանցի մեջ մարդկային պատկեր է տակ թաքնված է «աճառնություն», նա իր զոհի վրա նետվում է «ոսոսորդի» նման (I, 325, 323): Մ. Ասլանբեկը Բաղդասարի նկատմամբ խիստ արտահայտություններ է գործածում՝ «գազաճաճ անմտություն», «ասիական գազաճություն» հարձակվեցար», «օրհասական արջի պես գոռալով», «աճառնաճաճ մեծություն» և այլն: Հովնաթանյանցը կյանքի իմաստը տեսնում է այն բանում, որ «կարքերով ման գա, աշխարհի վայելչություններով թմրի, արբենա» (I, 335): «Նամակի» հեղինակը սարկազմով է դիմում պարոն Բաղդասարին. «Ունի՞ս դու մեծ արծաթ, ապա կեք, խմիր փառավոր... շրջի՛ր գեղեցիկ կարճեղով, ըր ընտանիքը պահիր... վայելչության մեջ...»: Հնդհանրություններ կան Բաղդասարի և Բեգզադեի միջև, որին ևս հատուկ էին ագահությունն ու «գազաճաճ անքթությունը» (III, 179): Նրանք երկուսն էլ անխնայ կեղեքում էին իրենց երիտասարդ ընկերակիցներին: «Նամակ առ ճառարակողը» (1858) հայտնի հոգվածում, մերկացնելով Նալբանդյանի մեքենայությունները, Մ. Նալբանդյանը գրել է. «Իշխանություն կա՞ ձեռքումդ, հարո՞ւստ ես. ուրեմն... գաբկի՛ր, խեղդի՛ր, ճալածի՛ր, ինչ կամիս արա՞...» (II, 325): Բողոքի այդ ձայնը լսելի է նաև Մ. Ասլանբեկի «Նամակում»։ «Մի՞թե... հարստականին թույլ է տրված առնել ինչ որ կամեք, բացարձակաբար. գրկել, գաբկել, սպառել և այդ բոլորը, որովհետև առնողը մեծատուն է...»: Վաճառականները և հարուստները Մ. Նալբանդյանի սատիրական հողվածներին համար մշտական թիրախ էին: Իր «Հեղատառակարանի» հենց սկզբում, Մ. Նաղարյանի «Թե ինչ է վաճառականությունը» խորհուրդը...» (սելուսիսափայլ», 1858, № 3) հողվածի առթիվ բանավեճելով «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի հետ, Մ. Նալբանդյանը Մ. Ասլանբեկի «Նամակին» ձայնակցող միտք է հայտնում, ընդ որում օգտագործելով նույն բառապաշարն ու արտահայտությունները (III, 11—12): Տվյալ դեպքում և՛ Մ. Նալբանդյանը, և՛ Մ. Նաղարյանը նույն կետին էին խփում:

Մ. Ասլանբեկի «Նամակի» կապակցությամբ առարկելով Աս. Ասատրյանին, Ռ. Նանումյանը գրել է, որ թեև այն «ենթադրաբար առնչվում է Նալբանդյանի» «Մեռնողհարցուկ» վեպի հերոսներից մեկի հետ, բայց չի կարող Նալբանդյանին լինել: Նամակում բերված կենսագրական իրողությունները ենթադրել են տալիս, որ այն պետք է գրած լինի Նաղարյանը¹⁵: Սակայն Ռ. Նանումյանը Մ. Ասլանբեկի «Նամակը» քննում է չափազանց նեղ և տեղայնացված: Ամսագրում հրապարակվել էր ո՛չ մասնավոր նամակ, որի հեղինակն անձնական հաշիվներ էր մաքրում իր հակառակորդի հետ: «Պարոն Բաղդասարը» Բեգզադեի և Հովնաթանյանցի նման ընդհանրացնող կերպար է: Բայց եթե նույնիսկ չբացառենք, որ Մ. Ասլանբեկի նամակում արտացոլված են Մ. Նաղարյանի հետ կապված որոշ «կենսագրական իրողություններ» (թե ինչպիսի՞, Ռ. Նանումյանը չի հաղորդում), ապա դրանք կարող էին Մ. Նալբանդյանի կողմից օգտագործված լինել «Հաստագլխենց պարոն Բաղդասարի» կերպարի ստեղծման ժամանակ, ճիշտ այնպես, ինչպես «Հաստագլուխ» Հովնա-

Թանյանցի կերպարը կերտելիս նա իրական նախատիպ ուներ ի դեմս մոսկովյան խոշոր առևտրական Անանովի (Հովնանյան), որին Մ. Նալբանդյանը հիշատակում է Պետրոպոլիտական բերդից ուղարկած իր նամակներից մեկում (V, 216): Նույնիսկ ենթադրվում է, որ ո՛չ առանց Անանովի միջամտության է դադարեցվել «Մեռելահարցունք» վեպի հրատարակությունը¹⁶: Անանովին գիտեր նաև Մ. Նալբարյանը, որը երևում է նրա 50—60-ական թվականների նամակներին¹⁷: Հավանաբար, Ռ. Նանուկյանը նրան նկատի ուներ՝ խոսելով Ս. Նալբարյանի «կենսագրական իրողությունների» մասին: Նրանց փոխհարաբերությունների մանրամասները մենք չգիտենք, բայց, կրկնում ենք, այդ ամենը կարող էր օգտագործվել Մ. Նալբանդյանի կողմից: Հովնաթանյանցին Կոմս էմմանուելի գրած նամակում կան այսպիսի տվյալներ. «...Մի օր, երբ Թեթևացած կը լինիմ գործերից, ցույց կտամ ձեզ ձեր անձը Հիշատակարանիս հայելու հեջ» (I, 337): Իսկ մի քանի ամիս անց երևան է գալիս նամակ-ֆելետոն «Հաստագլխենց պարոն Բաղասարի»՝ «հաստագլուխ» Հովնաթանյանցի (Հովնանյանի) եղբայրակցի մասին:

Պատահական չէ և այն, որ իր ֆելետոնի համար Մ. Նալբանդյանն ընտրել է Ալալբեկ կեղծանունը, որը համահնչյուն է իր «Հիշատակարանի» մշտական թղթակցին՝ Շահբեգին, իսկ Մաքսիմ Գորկու անվան տակ նա արդեն հանդես էր եկել («Մաքսիմ Գորկու»), հրապարակելով նրա երկու նամակը «Մեռելահարցունք» վեպից հետո: Այդպես էր կազմվել Մ. Նալբանդյանի և մի կեղծանունը՝ «Մարտիրոս Ասլանբեկ»:

4. «Պողոս Դուկասյան»: Այս ստորագրությամբ հրապարակվել է «Մի քանի խոսք...»¹⁸ մեծ հոդվածը, ուղղված Հովսեփ Զեքեղյանցին՝ «Հյուսիսսահայի» ու նրա հրատարակիչներ Ս. Նալբարյանի ու Մ. Նալբանդյանի կատաղի հակառակորդին: Ուշագրավ է, որ Մ. Նալբանդյանի ոխերիմ թշնամիներից մեկը՝ Հ. Զամուռյանը, Կ. Պոլսի «Երևակ» հանդեսի նոյեմբերյան (1860) համարում (լույս տեսած ուշացումով՝ 1861 թ. մարտ) գրում էր, որ Մ. Նալբանդյանը «Պրոթեոս մըն է, երբեմն Ս. Շահբեգ կըլլա, երբեմն Կոմս էմմանուել կըլլա, երբեմն Մ. Նալբանդյանց կըլլա, գուցե երբեմն ալ Դուկաս Պողոսյան կամ ուրիշ բան ըլլա»¹⁹: Այստեղ կարևոր է ընդգծել այն, որ այդ ազգանուններից յուրաքանչյուրի տակ ընթերցողները տեսնում էին Նալբանդյան-հրապարակախոսի յուրօրինակ, անկրկնելի ձևագիրը, և այն, որ Հ. Զամուռյանը ոչ ճիշտ է հաղորդում «Մի քանի խոսք...» հոդվածի տակ դրված ստորագրությունը. Մ. Նալբանդյանն արդեն ունեցել էր նման կեղծանուն՝ «Ծատուր Պողոսյան» («Նամակ հրատարակողին», 1859) և նա (որը նրա համար օրինաչափ էր) այն օգտագործում էր նոր կեղծանուն կազմելու համար:

«Մի քանի խոսք...» հոդվածը Հ. Զեքեղյանցի «Նամակի»²⁰ պատասխանն է, որի առթիվ Մ. Նալբանդյանն արդեն հանդես էր եկել իր «Հիշատակարանում»՝ «Պ. Զեքեղյանցի հայհուլությունը» («Հյուսիսսահայ», 1860, № 6): Աս. Ասատրյանն օրգանական կապ է տեսել Մ. Նալբանդյանի այդ կարճատև արձագանքի և Պ. Դուկասյանի ընդարձակ հոդվածի միջև, ինչպես Կ. Մարգարյանի «Նամակի» («կարճ ի կարճ գրածը») և Ս. Վարդանյանցի «Նամակի» («ընդարձակ ճառ») դեպքում էր, և դա ունի իր իմաստը: Պ. Դուկասյանի հոդվածին կցված են նրա երկու նամակը, որոնք իբր թե ուղարկված էին Թիֆլիսից մեկը՝ «Կոռնկ հայոց աշխարհին» հրատարակչի (1860 թ. ապրիլի 23-ին), իսկ մյուսը՝ «Հյուսիսսահայի» հրատարակչի Ս. Նալբարյանի

¹⁶ Ա շ ո տ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Նալբանդյանը և նրա ժամանակը, գ. 1, էջ 295:

¹⁷ Ս տ ե փ ա ն ո ս Ն ա զ ա Ր յ ա ն, Նամակների, տեքստը կազմեց, ծանոթագրեց և առաջարկը գրեց Ռ. Ն ա ն ու մ յ ա ն, Երևան, 1969, էջ 162, 182, 312, 313:

¹⁸ «Հյուսիսսահայ», 1860, № 12, էջ 484—514:

¹⁹ «Երևակ», 1860, № 94, էջ 308, տե՛ս նաև Ա. Մ. Ի ն ճ ի կ յ ա ն, Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1980, էջ 173:

²⁰ «Մեղու Հայաստանի», 1860, № 13, էջ 98—103:

անունով (1860 թ. սեպտեմբերի 30-ին)։ Վերջին նամակում հեղինակը պատմում է, թե իբր նա սկզբում իր հոգվածն ուղարկել է «Կոռնելին», իսկ երբ նրան այնտեղ մերժել են, ուղարկել է «Հյուսիսափայլին»։ Եվ «որպես ապացույց հասարակության առաջ և թե արդարև այնպես եղել է անցքը» նա կցել է նաև «Կոռնելի» հրատարակչին ուղղած նամակը։ Մեր կողմից ընդգծված խոսքերն էլ մատնում են «Հյուսիսափայլի» պաշտպանության հանդես եկող Պ. Ղուկասյանին։ Նրան անհրաժեշտ էր պահպանել արտաքին պատշաճություն, քանի որ նրա հոգվածը վերաբերում էր և՛ Մ. Նալբանդյանին, և՛ Ս. Նազարյանին, իսկ նրանց հարմար չէր իրենց պաշտպանել սեփական ամսագրում։ Այդ վարկածը հիմնավորվում է հասարակության տրամադրության մասին հաղորդումով, հասարակություն, որը պահանջում էր «հերքել ազգուկ կերպով» Հ. Զեքեզյանցի «շար զրպարտությունը»։ Իսկ որպեսզի այդ ամենն իրապատում երևար, Պ. Ղուկասյանը «Հյուսիսափայլի» հրատարակչին ուղղված նամակում բերում է նաև իրական փաստեր՝ հայտնի Ս. Նազարյանի և Մ. Նալբանդյանի հակառակորդներին։ Այսպես, նա հաղորդում է, որ 1860 թ. ապրիլի 23-ին իր ուղարկած հոգվածը «Կոռնելի» մերժել էր, նա այդ ժամանակ «անձնական գործի պատճառով ճանապարհորդել է դեպի Եվրոպա» և այդ պատճառով էլ չէր կարող անձամբ հետ վերցնել մերժված հոգվածը և դա խնդրել է անել «բարեկամներիցս մինի»։ «Վերջապես,— եզրափակում է Պ. Ղուկասյանը,— ...բերես վերադարձա Տփլիս, ստիպեցին ինձ ուղարկել (հոգվածը—Ս. Դ.) Զեք...»։ Իսկապես, Ս. Նազարյանը 1860 թ. ապրիլի 26-ին գնաց «դեպի Եվրոպա»։ Դորպատ և, իսկապես, «անձնական գործով»՝ «որ իմ գոքանչը առնում բերեմ մեր մոտ, Մոսկվա», որի մասին նա 1860 թ. մայիսի 1-ին Դորպատից գրած նամակում հաղորդում էր Ս. Ալեքսանդրյանին²¹։ Եվ, վերջապես, այդ ճանապարհորդության մասին գիտեին Մոսկվայում, մասնավորապես Հ. Զեքեզյանցը, որը հետևում էր «Հյուսիսափայլի» հրատարակչի յուրաքանչյուր քայլին։ Իսկ ինչ վերաբերում է «բարեկամներիցս մինին», ապա դա ակնարկ է՝ ուղղված Մ. Նալբանդյանին։ Իսկապես, 1860 թ. օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 3-ը նա գտնվում էր Թիֆլիսում, դեպի արտասահման ճանապարհին²², որի մասին ևս գիտեին նրա հակառակորդները։ Իրականում անամականները հետ կապված քայլը գրական հնարք էր, որին մեկ անգամ չէ, որ դիմել է Մ. Նալբանդյանի որ «Հիշատակարանում», որպեսզի մոլորության մեջ գցի հակառակորդներին։ Եվ «Մի քանի խոսք...» հոգվածն ամենայն հավանականությամբ չէր ուղարկվել և չէր մերժվել «Կոռնելի» խմբագրության կողմից, որն այդ ժամանակ «ունի բազմաթիվ շփման կետեր Նազարյանի և նրա «Հյուսիսափայլի» հետ և հաճախ իմ էջերից պրոպագանդում էր Նազարյանի հայացքները»²³։ Ուշագրավ է, որ «Կոռնելին» ընդհանրապես լուսվածքով չէր քանցնում Պ. Ղուկասյանի հրապարակումը, հավանաբար, «Կոռնելի» հրատարակչին ուղղված նրա նամակն ընդունելով որպես «Հյուսիսափայլի» հերթական գրական հնարանք, որին հաճախ դիմում էր Կոմս էմմանուելը։

Ըստ հնարավորին վերականգնենք Պ. Ղուկասյանի ստորագրությամբ հոգվածի երևան գալու ուստի իրադրությունը։ 1860 թ. մարտին «Մեղու Հայաստանին» հրատարակեց Հ. Զեքեզյանցի հոգվածը, իսկ ապրիլին Դորպատի ճանապարհին Ս. Նազարյանը Պետերբուրգում հանդիպում է Մ. Նալբանդյանին²⁴ և նրանց միջև խոսակցություն է տեղի ունենում Հ. Զեքեզյանցի հոգվածի առթիվ։ Մ. Նալբանդյանի՝ «Պ. Զեքեզյանցի հայհուդությունը» նոթում կան այսպիսի տողեր. «Մեղուի 13-երորդ թերթը հրատարակվելուց հետո, մեք բավական միջոց ֆենեցիքեք այն տպավորությանը, որ այդ գրվածը արեց

²¹ Ստ. Նազարյան, Նամականի, էջ 229։

²² Ա. Մ. Ինճիկյան, Նշվ. աշխ., էջ 146—147։

²³ Մ. Հ. Մխիթարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, էջ 79։

²⁴ Այդ մասին Ս. Նազարյանը հաղորդում է 1860 թ. մայիսի 1-ին Ս. Ալեքսանդրյանին ուղղած վերոհիշյալ նամակում (Ստ. Նազարյան, Նամականի, էջ 230)։

հասարակության վերա...» (III, 202)։ Սկզբում որոշվեց սահմանափակվել «Հյուսիսսփայլի» պատրաստվող № 6-ում Մ. Նալբանդյանի համառոտ արձագանքով (գրաքննչական թույլտվությունը 1860 թ. մայիսի 30-ին)։ Սակայն հասարակությունը պահանջում էր Հ. Չերքեզյանցին պատասխանել ավելի վճռական և ըստ էության (Պ. Ղուկասյանը վկայակոչում է Ս. Ալեքսանդրյանի 1860 թ. մայիսի 19-ի նամակը, հրատարակված «Հյուսիսսփայլի» № 7-ում)։ Եվ այդ ժամանակ որոշվեց հրատարակել ընդարձակ պատասխան, որին ձեռնամուխ եղավ Մ. Նալբանդյանը։ «Հյուսիսսփայլի» հրատարակչին Պ. Ղուկասյանի ուղղած նամակում կա հետևյալ ուղադրավ խոստովանությունը. «Ըջմարիտն սսեմ, այն օրին երբ կաղացի ես Մեղու Հայաստանի լրագրի մեջ մի այդպիսի անարժան գործ, շատ ցավեցա, բայց չկամեցա հանձն առնուլ պատասխանել մի վատթար գրվածքի...»։ Հեղինակի այդ խոստովանությունը համահնչյուն է այն բանին, ինչ Մ. Նալբանդյանը գրել է իր կարճ արձագանքում. «Մեզ գրում են թէ ինչո՞ւ համար լուռ մնացինք կարդալով... պ. Չերքեզյանցի հայհոյությունը» հարցին նա պատասխանում է, «Հարկ եղավ լռությամբ մերժել, որ պատասխանելով, մի գուցե մեք ես ընկերանայինք արժանի գրվածքի արժանի հեղինակին» (III, 199, 200)։ Մ. Նալբանդյանը ե՞րբ կարող էր Պ. Ղուկասյանի ստորագրության դեմ հոգված գրել։ Նման հնարավորություն նա ուներ մոտակայում եղած շրջանում՝ 1860 թ. հունիսի 16—27-ին²⁵։ Ամեն դեպքում հոգվածը գրվել է նախքան Հ. Չերքեզյանցի «Նազարյանցը և նրա նշանակությունը հայոց գրականության մեջ» հոգվածների նոր շարքը²⁶, որի մեջ լեզվական տեսանկյունից ոչնչացնող քննադատության էր ենթարկվում (248 կետերով) Ս. Նազարյանի «Հաղապս փորձնական հոգեբանության ճառն» (1851) աշխատությունը։ Իսկ Պ. Ղուկասյանի հոգվածը լրիվ նվիրված է 1860 թ. մարտի 26-ին, «Մեղու Հայաստանի» շաբաթաթիթերում Հ. Չերքեզյանցի հրատարակած հոգվածի պատասխանին։ Եվ նրանում միայն մի անգ զգիտության դրվուր» հասկացության առթիվ հղվում է Հ. Չերքեզյանցի «վերջին ճառերը», որտեղ հեղինակը կրկին շոշափում է այդ հասկացությունը²⁷։ Դա Ս. Նազարյանի կողմից արվել է, հասկանալի է, հետո՝ արդեն պատճառով հոգվածում, որը ևս մեկ անգամ հաստատում է մեր կարծիքն այն մասին, որ «Մի քանի խոսք...» հոգվածը հրատարակության էր պատրաստվել նախքան Մ. Նալբանդյանի արտասահման մեկնելը։

«Մի քանի խոսք...»-ը բանավիճային սուր հոգված է, որն իր ոճով շատ նման է Մ. Նալբանդյանի այդօրինակ հոգվածներին։ Հերքելով Հ. Չերքեզյանցի բոլոր անհիմն մեղադրանքները, հոգվածի հեղինակը դրանք բնութագրում է իբրև «հայհոյություն», այսինքն, ինչպես դրանք արժանիորեն գնահատել էր Մ. Նալբանդյանն իր «Պ. Չերքեզյանցի հայհոյությունը» առաջին արձագանքում։ Դրա հետ սերտորեն կապված է ընդհանրապես քննադատության նկատմամբ Հ. Չերքեզյանցի վերաբերմունքի բնութագիրը, որը կարևոր տեղ է գրավում «Մի քանի խոսք...» հոգվածում։ Այնտեղ բավական հանգամանորեն, իսկ երբեմն էլ բառացի ճշտությամբ կրկնվում են իսկական քննադատության էություն և նշանակության մասին Մ. Նալբանդյանի «Կրիտիկա Հանդես նոր հայախոսության» («Հյուսիսսփայլ», 1858, № 1) հայտնի հոգվածի հիմնական դրույթները, հոգված, որը գրվել էր Ս. Նազարյանի նույնանուն գրքի առթիվ և որը Հ. Չերքեզյանցը նախկինում հայհոյել էր։ Բերենք օրինակներ։ 1. Պ. Ղուկասյանի հոգվածում. «Կրիտիկա, երևի, ըստ ձեր հասկացողության է... զրպարտություն, հայհոյանք և դարձյալ հայհոյանք», «Կրիտիկա անաչառ դատաստան է», «Կրիտիկայի առաջին սուր պարտավորությունն է, որ նա խոսե... առանց երեսպաշտության»։ Իսկ Մ. Նալբանդյանի հոգվածում կարդում ենք՝ «Այժմ հարցնում ենք. մեղավո՞ր է մեր ժողովուրդը, եթե մեր պատվին

25 Ա. Մ. Ինճիկյան, նշվ. աշխ., էջ 142—143։

26 «Մեղու Հայաստանի», 1860, № 31—37 (հուլիս-սեպտեմբեր)։

27 Նույն տեղում, № 32 (6. VIII. 1860)։

սխառաստիկները հասկացրել են նորան, թե կրիտիկան բամբասանք է կամ նախատիք (насквозь)... Այո՛, կրիտիկա մի սուտք և անկողմնապահ դատաստան է, մի այնպիսի դատաստան, որի առաջև միեկնույն են բարեկամ և թշնամի, որ և մի անաչառ դատավորի նման քննում է մի գործի արժանավորություն և պակասություն» (II, 175)։ 2. Ինչպես հայտնի է, քննադատության մասին Մ. Նալբանդյանի հոդվածն առաջ բերեց «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի խմբագիր Ստ. Մանդինյանի բուռն ունակցիան։ Մ. Նալբանդյանը նրան արժանի պատասխան տվեց՝ ձեռնամակ առ հրապարակողը» («Հյուսիսափայլ», 1858, № 4) հոդվածում։ Հենվելով քննադատության մասին իր հոդվածի վրա, նա ասում էր, որ «Մեղու Հայաստանի» խմբագիրն իր շար պատասխանով հաստատեց քննադատության մասին գոյություն ունեցող կեղծ կանխակալ կարծիքը, չորպես թե կրիտիկայի դիտավորությունը ոչ այլ ինչ էր, և թե ոչ պարսավել և պախարակել... ճշմարտելով ռուսաց ասածը, թե «ЧТО У КОГО БОЛИТ, ТОТ О ТОМ И ГОВОРИТ» (II, 227)։ Բանավիճելով Հ. Զերքեզյանցի հետ, Պ. Դուկասյանը բերում է ռուսական նույն ասացվածքը։ Նկատենք, որ սիրված պատկերավոր արտահայտությունների, առակների և ասացվածքների կրկնությունը Նալբանդյան - հրապարակախոսի սովորությունն էր։ 3. Քանի որ Հ. Զերքեզյանցն իր հոդվածում կրկնում էր Ս. Նազարյանի մասին Ստ. Մանդինյանի որոշ հերյուրանքները, ապա հետաքրքրական է Մ. Նալբանդյանի պատասխանը («Հիշատակարանի» առաջին գլխում) համեմատել Պ. Դուկասյանի հոդվածի համապատասխան տեղերի հետ։ Նախ աչքի են զարնում հոդվածների նույնական անվանումները։ Ստ. Մանդինյանի հոդվածի վերնագիրն է՝ «Մի փանի խոսք գեղապատվելի Ստեփանոս Տեր-Նսայան Նազարյանցի գրված մատյանների վերա»²⁶, իսկ Պ. Դուկասյանի հոդվածի լրիվ վերնագիրն հետևյալն է. «Մի փանի խոսք գեղապատվել վարդապետ արեւելեյան լեզվագիտության Ս. Նազարյանցի և նորա հակառակորդների վերա, բարեմիտ ընթերցողների դատաստանի առաջև»։ Հոդվածների վերնագրերում այդ համընկնումը պատահական չէ. Պ. Դուկասյանը (բարեմիտ ընթերցողներից» մեկը) կարծես թե վերականգնում էր իսկական հարգանքը դոկտոր (վարդապետ) Ս. Նազարյանի անձի և գիտական աստիճանի նկատմամբ, որն անիրավացիորեն «Մեղու Հայաստանի»-ում կասկածի տակ էր դրվել սկզբում նրա խմբագրի, իսկ հետո Մոսկվայից նրա ձայնակցի՝ Հ. Զերքեզյանցի կողմից։ Դատապարտելով Հ. Զերքեզյանցի անհեթեթ հայտարարությունը, թե «կարելի է դոկտոր լինել և ոչինչ չիմանալ», Պ. Դուկասյանը գրում է, թե ինչպես է Ս. Նազարյանին շնորհվել գիտության դոկտորի կոչում, լիովին կրկնելով Մ. Նալբանդյանի պատասխանը Ստ. Մանդինյանի հոդվածին, որում ևս ծաղրի էր նեթարկվում Ս. Նազարյանի գիտական աստիճանը (III, 10)։ 4. Հ. Զերքեզյանցը, անդրադառնալով Ս. Նազարյանի «Հայկական լեզվի խորհուրդը» («Հյուսիսափայլ», 1858, № 7) հոդվածին, նրան մեղադրում է այն բանում, որ նա փորձում է հերքել Վերելի և ճշմարիտ գիտնականներին, որպես են Չամչյան, Ավգերյան, Ինճիճյան, հայոց լեզվի առաջին լինելը աշխարհի երեսին հարցում, համարելով այդ կարծիքը շատ առասպելական բան»։ Ս. Նազարյանի հասցեին նմանօրինակ մեղադրանք էր ներկայացրել նաև Ստ. Մանդինյանը, որի համար «Հիշատակարանի» առաջին գլխում ենթարկվել էր Մ. Նալբանդյանի ծաղրին. «...Նազարյանցը ասել է, թե հայոց լեզուն առաջանում է սանկրիտյան լեզվի մի ճյուղից, մինչդեռ Չամչյանը, Ավգերյանը և Ինճիճյանը ապացուցանում են հայոց լեզվի առաջնությունը... Նա ամաչում եմ պատասխանել... որ այժմ ևս կան հայերի մեջ մարդիկ, որ մոլորվելով կարծում էին բոլորովին երեխայական սուտ պարծանքով, թե հայոց լեզուն Ադամի լեզուն է» (III, 10—11)։ 5. Դեռ առաջին պատասխանում Մ. Նալբանդյանը նշում էր, որ «Պ. Զերքեզյանցի հայհույությունը... ամենայն առատու-

²⁸ «Մեղու Հայաստանի», 1858, № 16։ Մ. Նալբանդյանի հիշատակարանը սկսվում է Ստ. Մանդինյանի այդ հոդվածի հետ բանավեճով։

Թյամբ Թափվում էր Հյուսիսսփայլի թե՛ հրատարակողի և թե՛ նորա գործակիցների վերա» (III, 199), նկատի ունենալով իրեն, քանի որ Հ. Չերքեզյանցը, չհշատակելով Մ. Նալբանդյանի անունը, շոշափել էր նաև նրա աշխատությունները: Այն ժամանակ Մ. Նալբանդյանը հարկ չհամարեց պատասխանել նրա հարձակումներին: Պ. Դուկասյանի հոդվածում «Նազարյանցի գործակիցների դեմ» բոլոր հարձակումները ներկայացված են նաև իբրև քննադատության էությունը և նշանակությունը խեղաթյուրված հասկանալու նմուշներ, ինչի դեմ վճռականորեն պայքարում էր Մ. Նալբանդյանը: Հ. Չերքեզյանցը խիստ դժգոհ էր, որ «Հյուսիսսփայլը» անհարգալից էր «Ներսես կաթողիկոսի, քիտնական Գ. Վարդապետի և առհասարակ բոլոր հոգևորականների վերա»: Առաջին դեպքում խոսքը Գ. Գեղամյանցի մասին Մ. Նալբանդյանի գրած «Մահացուցակ» («Հյուսիսսփայլ», 1858, № 2) հոդվածին է վերաբերում, հոգված, որտեղ խոսվում է Ներսես կաթողիկոսի և ի. Արովյանի բարդ փոխհարաբերությունների մասին (II, 186—187): Այդ հոդվածից բերելով մեծ քաղվածք, Պ. Դուկասյանը եզրակացնում է. «Ահա քեզ կանոնների կրիտիկայի ճշարտություն և առողջ դատողություն, պ. Չերքեզյանց»: Ինչ վերաբերում է «քիտնական Գ. Վարդապետին», ապա նա նկատի ուներ եպիսկոպոս Սարգիս Զալալյանին: Հ. Չերքեզյանցը վիրավորված էր, որ «Հյուսիսսփայլը» շրջապնդել էր այդ «քիտնականին», «Գիրսաս» և «Եպիսկոպոս բրամին»: Մ. Նալբանդյանն իր «Հիշատակարանում» այդպես էր անվանել Ս. Զալալյանին, որի մասին նշվեց վերը: Հ. Չերքեզյանցը գնդակոծության տակ էր վերցրել նաև Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների 1859 թ. հունվարին տված ներկայացումների մասին Մ. Նալբանդյանի գրախոսությունը՝ «Հայկական թեատրոն Մոսկվայի մեջ» («Հիշատակարան»), և միայն այն պատճառով, որ վերջինս մի շարք դիտողություններ էր պարունակում, շնայած, ամբողջությամբ առած, Մ. Նալբանդյանը ջերմորեն պաշտպանում էր ուսանողների ձեռնարկումը (III, 108—111): Հ. Չերքեզյանցի հերյուրանքները հերքելու համար Մ. Նալբանդյանի գրախոսությունից բերելով մեծ մեջբերում, Պ. Դուկասյանը եզրակացնում է, որ «ըստ որում միայն վատն ասել և բամբասել սեփական է այ. Չերքեզյանցին»: 6. Վերջապես, Ս. Նաղարյանի հասցեին Հ. Չերքեզյանցի ծանր մեղադրանքներին Պ. Դուկասյանը պատասխանում է աշխարհաբարի ասպարեզում նրա հսկայական ծառայությունների քննադատմամբ, գրեթե բառացիորեն կրկնելով Մ. Նալբանդյանի խոսքերը Ս. Նաղարյանի ձեռնից՝ է. Սյուրի «Թափառական հրեա»-ի թարգմանության առթիվ (II, 71):

Կարծում ենք, որ բերված փաստարկները լիովին բավարար են համոզվելու, որ «Պողոս Դուկասյան» ստորագրության տակ ևս թաքնվում է Մ. Նալբանդյանը:

К ВОПРОСУ О ПСЕВДОНИМАХ М. НАЛБАНДЯНА

СЕРГЕЙ ДАРОНИЯН

Резюме

В деле раскрытия псевдонимов Микаэла Налбандяна огромны заслуги видных ученых—А. Иоаннисяна, Н. Мурадяна и А. Асатрян. Последний в 1954 и 1960 гг. выступил в печати с гипотезой о принадлежности Налбандяну нескольких новых псевдонимов. Однако он достаточно убедительно аргументировал лишь два из них («Камсар Хачатурян» и «Киракос Маркарян»), об остальных же говорил в общей форме. На основе произведенного дополнительного текстологического анализа полностью подтверждается гипотеза А. Асатряна. В данной статье, помимо названных, говорится также о псевдонимах «Мартирос Асланбек» и «Погос Гукасян».